

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր Առաջին Պաշտօնական Այցելութիւնը Յորդանանահայութեան

Հինգշաբթի, 27 Յունիս 2013, առաւօտեան ժամը 9-ին, նորընտիր գահակալ Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Ս. Նուրհան Արք. Մանուկեան, Երուսաղէմէն ուղղուեցաւ դէպի Յորդանան տալու Պատրիարքական իր առաջին այցելութիւնը տեղւոյն հայ գաղութին: Պատրիարք Սրբազան Հօր ընկերակցեցան Հոգեշնորհ Ս. Գուսան, Ս. Բագրատ եւ Ս. Նորայր Վարդապետները: Յորդանան մուտքին, Պատրիարք Սրբազան Հայրը դիմաւորուեցաւ Յորդանանի Պատրիարքական Փոխանորդ՝ Գերշ. Վահան Արք. Թօփալեանի կողմէ: Ըստ ծրագրին, Պատրիարք Սրբազան Հայրը Սուրբ եւ Անմահ Պատարագ մատոյց Ուրբաթ, 28 Յունիս 2013-ին, առաւօտեան ժամը 10-ին, Սուրբ Թադէոս Եկեղեցոյն մէջ: Պատրիարք Սրբազան Հայրը, յընթացս Պատարագին, հոգեշունչ քարոզ մը խօսեցաւ խումներամ հաւատացեալներուն, որոնք շտապած էին Սուրբ Թադէոս Հայոց Եկեղեցի, հաղորդուելու անկէ եւ ծանօթանալու անոր: Պատարագի աւարտին, հաւատացեալներ առիթն ունեցան Պատրիարք Սրբազան Հօր աջը համբուրելու եւ ստանալու անոր օրհնութիւնը:

Պատարագէն վերջ, Տեղական Ազգ. Խորհուրդի հրաւերով, Պատրիարք Սրբազան Հայրը առաջնորդուեցաւ Յոյն Ուղղափառ Գաղութի Միութեան ճաշարանը, ուր Ազգ. Խորհուրդի անդամներ ճաշեցին Սրբազան Պատրիարք Հօր հետ եւ վայելեցին անոր մտերմութիւնը: Երեկոյեան ժամը 7-ին, Պատրիարք Սրբազան Հայրը ընդունուեցաւ ՀՄԸՄ-ի սրահին մէջ, Յորդանանահայ Գաղութին կողմէ կազմակերպուած հիրասիրութեամբ մը: ՀՄԸՄ-ի սրահի մուտքին, սկսուտներ թմբկահարութեամբ դիմաւորեցին Պատրիարք Սրբազան Հայրը եւ Ազգ. Խորհուրդի անդամներ առաջնորդեցին զինք սրահէն ներս: Նախքան հիրասիրութիւնը, Պր. Ներսէս Ներսէսեան «Բարի Գալուստ»ի խօսք ընելով բարեմասնեց Պատրիարք Սրբազան Հայրն ու ներկայացուց գաղութին ակնկալած բարենպաստակ ծրագիրներն ու միտքերը: «Բարի Գալուստ»ի խօսքէն վերջ, անակնկալ մը պատրաստուած էր Ազգ. Խորհուրդին կողմէ, «Ասա» մը, գաւազան մը որ իբր նուէր յանձնուեցաւ Գերշ. Ս. Վահան Արք. Թօփալեանի կողմէ: Գաւազանի յանձնումէն ետք, խօսք առաւ ՀՄԸՄ-ի Ատենապետը, որ նոյնպէս «Բարի Գալուստ» մաղթելով շնորհատրեց Պատրիարք Սրբազան Հօր ընտրութիւնն ու գահակալութիւնը, եւ յանուն տեղական Միութիւններուն՝ յաղճապակիէ պատրաստուած պատկեր մը յանձնուեցաւ իբրեւ յուշանուէր:

Պատրիարք Սրբազան Հայրը խօսք առաւ եւ շնորհակալութիւն յայտնեց Գերշ. Ս. Վահան Արք. Թօփալեանին, Տեղական Ազգ. Խորհուրդին եւ բոլոր միութիւններու վարչութիւններուն եւ անդամներուն, իրենց տարած աշխատանքին եւ նուէրներուն համար: Պատրիարք Սրբազան Հայրը իր խօսքին մէջ շեշտեց համագործակցութեան գաղափարը եւ

թէ միասնական աշխատանքի արդիւնքները իրենց բարերար օգուտը ունին ի շահ մեր գաղութին, որ ի Յորդանան, Երուսաղէմ, եւ թէ միայն միասնական աշխատանքով համախմբուած Հայց. Առաք. Եկեղեցւոյ շուրջ կարելի է խմբուելով կարելի է գաղութի ապագան բարձունքներ առաջնորդել:

Պատրիարք Սրբազան Հօր խօսքէն վերջ, Պատրիարք Սրբազան Հայրը եւ բոլոր ներկաները հիւրասիրուեցան համադամ ուտելիքներով եւ ըմպելիներով, սիրոյ եւ միասնութեան մթնոլորտի մը մէջ:

Ներկաներէն շատեր Պատրիարք Սրբազան Հօր մօտենալով առին անոր աջն ու օրհնութիւնը: Երեկոյեան ժամը 9:30-ին, Պատրիարք Սրբազան Հայրը եւ իրեն ընկերակցող հոգեւորականները ուղղուեցան դէպի հիւրանոց հանգստանալու եւ պատրաստուելու յաջորդ օրուան Երուսաղէմ վերադարձին:

Շաբաթ, 29 Յունիս 2013-ին, առաւօտեան ժամը 8:30-ին, Պատրիարք Սրբազան Հայրը իրեն ընկերակցող հոգեւորականներուն հետ վերադարձաւ Մայրավանք: Մինչեւ Յորդանանի «Ալլէպի» սահմանագլուխ՝ Պատրիարք Սրբազան Հօր ընկերակցեցաւ Պատր. Փոխանորդ՝ Գերշ. Տ. Վահան Արք. Թօփալեան:



Պատարագիչ Պատրիարք Սրբազան Հայրը՝ Քարոզի պահուն: